# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 372- Ա                                        24 դեկտեմբերի 2015 թ.

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպատակներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ միանվագ օգնություն ՀՀ Գեղարքունիքի մարզի Ձորագյուղ համայնքի բնակիչ՝ ավտովթարից զոհված Գևորգ Գառնիկի Հարությունյանի ընտանիքին, համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել Գևորգ Հարությունյանի մորաքրոջ որդի Գոռ Ղազարյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015 թ. դեկտեմբերի 24 - ի
N 372 - Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂԻ

| հ/հ | ազգանուն, անուն | հասցե | հատկացված գումարի չափը դրամով | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Հարությունյան Գևորգ Գառնիկի | գ. Ձորագյուղ | 100000/մեկ հարյուր հազար/ | Ավտովթարից զոհված |
| | Ընդամենը | | 100000/մեկ հարյուր հազար/ | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝ ՖՏՏՁ Վարչություն
Ա.Բաղեյան